ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 14 » ապրիլի 2020թ. №7-Ա

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020թ. ԱՊՐԻԼԻ 14-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

**համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Լոռի Բերդ համայնքի ավագանու 2020թ. ապրիլի 14-ի նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ավետիսյան Արմեն Սիլվեստրի | | | |
| Խալաթյան Ավետիք Հարությունի | | | |
| Մարտիրոսյան Հուսիկ Հենրիկի | | | |
| Մուրադյան Կարեն Ցոլակի | | | |
| Շահնազարյան Թամարա Էդիկի | | | |
| Չիբուխչյան Արման Հրաչիկի | | | |
| Սախլյան Արտավազդ Ռուբիկի | | | |
| Սախլյան Էդգար Ռոբերտի | | | |
| Վարդանյան Մելանյա Գեորգիի | | | |

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ.

2020թ. ապրիլի 14

գ. Լոռի Բերդ

Հավելված.
ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու
2020թ. ապրիլի 14-ի № 4 -Ա որոշման

# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1) Լոռի Բերդ համայնքի ավագանու 2020թ. ապրիլի 14-ի նիստի օրակարգի հաստատում:

2) Լոռի Բերդ համայնքի 2020թ. բյուջեի 1-ին եռամսյակի կատարման մասին Լոռի Բերդ համայնքի ղեկավարի հաղորդումը ի գիտություն ընդունելու վերաբերյալ

3) Լոռի Բերդ համայնքաի 2020թ. բյուջեում փոփոխություններ կատարելու վերաբերյալ

4) Լոռի Բերդ համայնքի Լեջան գյուղի բնակչին հողի հարկի գծով հարկային արտոնություն տրամադրելու վերաբերյալ

5) Լոռի Բերդ համայնքի Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցներին Հաղթանակի օրվա կապակցությամբ նվերներ տրամադրելու վերաբերյալ

6) Լոռի Բերդ համայնքի դպրոցների երեխաներին վերջին զանգի կապակցությամբ նվերներ տրամադրելու վերաբերյալ

7) ԵԿՄ Ստեփանավանի տարածքային ստորաբաժանմանը մայիսի 8-ի Երկրապահի օրվա կապակցությամբ նվիրատվություն տրամադրելու վերաբերյալ

8) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը հաստատելու մասին¦ Լոռի Բերդ համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 27-ի թիվ 14-Ա որոշման հավելվածը փոփոխելու վերաբերյալ

9) Համայնքային սեփականություն հանդիսացող և Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի բնակչին պատկանող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդ-վաճառքով օտարելու վերաբերյալ:

10) ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության հետ իրականացվող վարձատրվող հասարակական աշխատանքների ծրագրին հավանություն տալու վերաբերյալ

11) «Ծաղկող Հայաստան» ՀԿ-ի կողմից Լոռի Բերդ համայնքի Կողես բնակավայրում համայնքային կենտրոն ստեղծելու ծրագրին հավանություն տալու վերաբերյալ

12) Լոռի Բերդ համայնքի ավագանու 30.10.2018թ. թիվ 42-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ                Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 14 » ապրիլի 2020թ. № 8-Ն

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2020թ. ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով՝

**համայնքի ավագանին որոշում է.**

Ընդունել ի գիտություն Լոռի Բերդ համայնքի 2020թ. բյուջեի 1-ին եռամսյակի կատարման մասին Լոռի Բերդ համայնքի ղեկավարի հաղորդումը:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ավետիսյան Արմեն Սիլվեստրի | [signature] | | |
| Խալաթյան Ավետիք Հարությունի | [signature] | | |
| Մարտիրոսյան Հուսիկ Հենրիկի | [signature] | | |
| Մուրադյան Կարեն Ցոլակի | [signature] | | |
| Շահնազարյան Թամարա Էդիկի | [signature] | | |
| Չիբուխչյան Արման Հրաչիկի | [signature] | | |
| Չատինյան Կարեն Հրաչիկի | [signature] | | |
| Պապյան Հարություն Միշիկի | [signature] | | |
| Սախյան Արտավազդ Ռուբիկի | [signature] | | |
| Սախյան Էդգար Ռոբերտի | [signature] | | |
| Վարդանյան Մելանյա Գեորգիի | [signature] | | |

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ.

2020թ. ապրիլի 14
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 14 » ապրիլի 2020թ. №9-Ա

## ԾԱՂԿՈՂ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂԵՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝

**համայնքի ավագանին որոշում է.**

1. Տալ հավանություն մասնակցելու Ծաղկող Հայաստան ՀԿ-ի կողմից Լոռի Բերդ համայնքի Կողես բնակավայրում համայնքային կենտրոնի ստեղծման ծրագրին և համայնքի 2020թ. բյուջեից ներդրում կատարել ծրագրի ընդհանուր արժեքի մինչև 10%-ի չափով:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ավետիսյան Արմեն Սիլվեստրի | [signature] | | |
| Խալաթյան Ավետիք Հարությունի | [signature] | | |
| Մարտիրոսյան Հուսիկ Հենրիկի | [signature] | | |
| Մուրադյան Կարեն Յոլակի | [signature] | | |
| Շահնազարյան Թամարա Էդիկի | [signature] | | |
| Չիբուխչյան Արման Հրաչիկի | [signature] | | |
| Սախկյան Արտավազդ Ռուբիկի | [signature] | | |
| Սախկյան Էդգար Ռոբերտի | [signature] | | |
| Վարդանյան Մելանյա Գեորգիի | [signature] | | |

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

2020թ. ապրիլի 14
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 14 » ապրիլի 2020թ. №20-Ա

## ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝

**համայնքի ավագանին որոշում է.**

1. Տալ հավանություն մասնակցելու վարձատրվող հասարակական աշխատանքների ծրագրին և կատարել ներդրում համայնքի 2020թ. բյուջեից:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ավետիսյան Արմեն Սիլվեստրի | [signature] | | |
| Խալաթյան Ավետիք Հարությունի | [signature] | | |
| Մարտիրոսյան Հուսիկ Հենրիկի | [signature] | | |
| Մուրադյան Կարեն Ցոլակի | [signature] | | |
| Շահնազարյան Թամարա Էդիկի | [signature] | | |
| Չիբուխչյան Արման Հրաչիկի | [signature] | | |
| Սախյան Արտավազդ Ռուբիկի | [signature] | | |
| Սախյան Էդգար Ռոբերտի | [signature] | | |
| Վարդանյան Մելանյա Գեորգիի | [signature] | | |

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ.
2020թ. ապրիլի 14
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 14 » ապրիլի 2020թ. №11-Ա

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՋԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով.

**համայնքի ավագանին որոշում է.**

1. Հողի հարկի գծով հարկային արտոնություն տրամադրել Սեդա Սարուխանյանին 15145 (տասնհինգ հազար հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամի չափով:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ավետիսյան Արմեն Սիլվեստրի | | | |
| Խալաթյան Ավետիք Հարությունի | | | |
| Մարտիրոսյան Հուսիկ Հենրիկի | | | |
| Մուրադյան Կարեն Ցոլակի | | | |
| Շահնազարյան Թամարա Էդիկի | | | |
| Չիբուխչյան Արման Հրաչիկի | | | |
| Սախյան Արտավազդ Ռուբիկի | | | |
| Սախյան Էդգար Ռոբերտի | | | |
| Վարդանյան Մելանյա Գեորգիի | | | |

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ.

2020թ. ապրիլի 14
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**« 14 » ապրիլի 2020թ. №62-Ա**

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՅԻՍԻ 9-Ի «ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՎԱ» ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՆՎԵՐՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42 կետերով, ինչպես նաև Լոռի Բերդ համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 27-ի 14-Ա որոշմամբ.

**համայնքի ավագանին որոշում է.**

1. Լոռի Բերդ համայնքի Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցներին մայիսի 9-ի Հաղթանակի օրվա կապակցությամբ, Լոռի Բերդ համայնքի 2019թ. բյուջեից «Այլ մշակութային կազմակերպություններ» ծրագրի 08 բաժնի 02 խմբի 04 դասի 4269 հոդվածով նախատեսված գումարից նվեր գնելու համար տրամադրել 60.000 (վաթսուն հազար) դրամ.

1) Սուրեն Շամիրի Պապիկյանին – գյուղ Լոռի Բերդ:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ավետիսյան Արմեն Սիլվեստրի | | | |
| Խալաթյան Ավետիք Հարությունի | | | |
| Մարտիրոսյան Հուսիկ Հենրիկի | | | |
| Մուրադյան Կարեն Յոլակի | | | |
| Շահնազարյան Թամարա Էդիկի | | | |
| Չիբուխչյան Արման Հրաչիկի | | | |
| Սախոյան Արտավազդ Ռուբիկի | | | |
| Սախոյան Էդգար Ռոբերտի | | | |
| Վարդանյան Մելանյա Գեորգիի | | | |

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ.

2020թ. ապրիլի 14

գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

« 14 » ապրիլի 2020թ. №13-Ա

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՅԻՍԻ 8-ի «ԵՐԿՐԱՊԱՀԻ ՕՐՎԱ» ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵԿՄ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆԸ 100000 ՀՀ ԴՐԱՄ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42 կետերով, ինչպես նաև Լոռի Բերդ համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 27-ի 14-Ա որոշմամբ.

**համայնքի ավագանին որոշում է.**

1. ԵԿՄ Ստեփանավանի տարածքային ստորաբաժամնանը մայիսի 8-ի երկրապահի օրվա կապակցությամբ, Լոռի Բերդ համայնքի 2020թ. բյուջեի «Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ» ծրագրի 08 բաժնի 04 խմբի 02 դասի 4819 հոդվածով նախատեսված գումարից 100000 (մեկ հարյուր հազար) դրամը տրամադրել որպես նվիրատվություն:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ավետիսյան Արմեն Սիլվեստրի | | | |
| Խալաթյան Ավետիք Հարությունի | | | |
| Մարտիրոսյան Հուսիկ Հենրիկի | | | |
| Մուրադյան Կարեն Ցոլակի | | | |
| Շահնազարյան Թամարա Էդիկի | | | |
| Չիբուխչյան Արման Հրաչիկի | | | |
| Զատինյան Կարեն Հրաչիկի | | | |
| Պապյան Հարություն Միշիկի | | | |
| Սախլյան Արտավազդ Ռուբիկի | | | |
| Սախլյան Էդգար Ռոբերտի | | | |
| Վարդանյան Մելանյա Գեորգիի | | | |

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ.
2020թ. ապրիլի 14
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 14 » ապրիլի 2020թ. №14-Ա

## ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ՆՎԵՐՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42 կետերով, ինչպես նաև Լոռի Բերդ համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 27-ի 14-Ա որոշմամբ.

**համայնքի ավագանին որոշում է.**

1. Լոռի Բերդ համայնքի դպրոցների շրջանավարտներին վերջին զանգի կապակցությամբ համայնքի 2020թ. բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» ծրագրի 08 բաժնի 02 խմբի 04 դասի 4269 նախատեսված գումարից նվեր գնելու համար տրամադրել 430.000(չորս հարյուր երեսուն հազար) դրամ (յուրաքանչյուր շրջանավարտին 10.000-ական ՀՀ դրամ):
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ավետիսյան Արմեն Սիլվեստրի | [signature] | | |
| Խալաթյան Ավետիք Հարությունի | [signature] | | |
| Մարտիրոսյան Հուսիկ Հենրիկի | [signature] | | |
| Մուրադյան Կարեն Ցոլակի | [signature] | | |
| Շահնազարյան Թամարա Էդիկի | [signature] | | |
| Չիբուխչյան Արման Հրաչիկի | [signature] | | |
| Զատինյան Կարեն Հրաչիկի | բացակա | | |
| Պապյան Հարություն Միշիկի | բացակա | | |
| Սախյան Արտավազդ Ռուբիկի | [signature] | | |
| Սախյան Էդգար Ռոբերտի | [signature] | | |
| Վարդանյան Մելանյա Գեորգիի | [signature] | | |

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ.
2020թ. ապրիլի 14
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 14 » ապրիլի 2020թ. №14-Ա

## ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ՆՎԵՐՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42 կետերով, ինչպես նաև Լոռի Բերդ համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 27-ի 14-Ա որոշմամբ.

**համայնքի ավագանին որոշում է.**

1. Լոռի Բերդ համայնքի դպրոցների շրջանավարտներին վերջին զանգի կապակցությամբ համայնքի 2020թ. բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» ծրագրի 08 բաժնի 02 խմբի 04 դասի 4269 նախատեսված գումարից նվեր գնելու համար տրամադրել 430.000(չորս հարյուր երեսուն հազար) դրամ (յուրաքանչյուր շրջանավարտին 10.000-ական ՀՀ դրամ):
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ավետիսյան Արմեն Սիլվեստրի | | | |
| Խալաթյան Ավետիք Հարությունի | | | |
| Մարտիրոսյան Հուսիկ Հենրիկի | | | |
| Մուրադյան Կարեն Ցոլակի | | | |
| Շահնազարյան Թամարա Էդիկի | | | |
| Չիբուխչյան Արման Հրաչիկի | | | |
| Չատինյան Կարեն Հրաչիկի | բացակա | | |
| Պապյան Հարություն Միշիկի | բացակա | | |
| Սախոյան Արտավազդ Ռուբիկի | | | |
| Սախոյան Էդգար Ռոբերտի | | | |
| Վարդանյան Մելանյա Գեորգիի | | | |

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ.
2020թ. ապրիլի 14
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 14 » ապրիլի 2020թ. №25-Ա

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30.10.2018Թ. ԹԻՎ 42-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով,

**համայնքի ավագանին որոշում է.**

1. Լոռի Բերդ համայնքի ավագանու 30.10.2018թ. թիվ 42-Ա որոշման 9-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

9. Տալ հավանություն Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ գյուղում գտնվող Մանվել Ղարիբյանին սեփականության իրավունքով պատկանող 06-044-0121-0101 ծածկագրով 1.2 հեկտարից 0.5 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայրը բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոխադրելու առաջարկությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ավետիսյան Արմեն Սիլվեստրի | [signature] | | |
| Խալաթյան Ավետիք Հարությունի | [signature] | | |
| Մարտիրոսյան Հուսիկ Հենրիկի | [signature] | | |
| Մուրադյան Կարեն Յուլիկի | [signature] | | |
| Շահնազարյան Թամարա Էդիկի | [signature] | | |
| Չիբուխչյան Արման Հրաչիկի | [signature] | | |
| Սախյան Արտավազդ Ռուբիկի | [signature] | | |
| Սախյան Էդգար Ռոբերտի | [signature] | | |
| Վարդանյան Մելանյա Գեորգիի | [signature] | | |

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ.

2020թ. ապրիլի 14

գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 14 » ապրիլի 2020թ. №18Ա

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 14-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

**համայնքի ավագանին որոշում է.**

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 27-ի թիվ 14-Ա որոշման հավելվածը խմբագրել նոր բովանդակությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ավետիսյան Արմեն Սիլվեստրի | [signature] | | |
| Խալաթյան Ավետիք Հարությունի | [signature] | | |
| Մարտիրոսյան Հուսիկ Հենրիկի | | [signature] | |
| Մուրադյան Կարեն Յոլակի | [signature] | | |
| Շահնազարյան Թամարա Էդիկի | [signature] | | |
| Չիբուխչյան Արման Հրաչիկի | [signature] | | |
| Սախսյան Արտավազդ Ռուբիկի | [signature] | | |
| Սախսյան Էդգար Ռոբերտի | [signature] | | |
| Վարդանյան Մելանյա Գեորգիի | [signature] | | |

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ.

2020թ. ապրիլի 14

գ. Լոռի Բերդ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու
2017թ. դեկտեմբերի 27-ի № 18-Ա որոշման
(Հավելվածը փոփոխված է Լոռի Բերդ համայնքի
ավագանու 14.04.2020թ. թիվ 16-Ա որոշմամբ)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

**1.** Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի (այսուհետև՝ համայնքի) կամավոր խնդիրների և դրանց լուծման նպատակով համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների և իրականացման հետ կապված հարաբերությունները:

**2.** Համայնքի կամավոր խնդիրներն են համայնքի սոցիալապես անապահով բնակչության սոցիալական օգնության տրամադրման կազմակերպումը.

**3.** Համայնքի կամավոր խնդիրների լուծման նպատակով համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները իրականացնում են հետևյալ սեփական լիազորությունները՝

1) միջոցներ են ձեռնարկում սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ:

**4.** Համայնքի կամավոր խնդիրների և դրանց լուծման համար սեփական լիազորությունների իրականացման համար համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները չեն կարող գերազանցել համայնքի այդ տարվա բյուջեով նախատեսված եկամուտների 2,5%:

**5.** Կամավոր խնդիրների լուծման համար ֆինանսական միջոցների հատկացումը ***իրականացնում է համայնքի ղեկավարը***՝ համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և միայն դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման չափերի մասին ավագանու որոշումների և (կամ) համաձայնության առկայության դեպքերում:

**6.** Այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի կողմից կամավոր խնդիրների լուծման համար չի պահանջվում ֆինանսական և գույքային միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

**7.** Կամավոր խնդիրների լուծման իրականացման առաջարկություն կարող են նախաձեռնել համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու անդամները, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ:

**8.** Այն դեպքում, երբ կամավոր խնդրի լուծման իրականացումը նախաձեռնում է համայնքի ղեկավարը կամ համայնքի ավագանու անդամը, նախաձեռնողը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում խնդրի լուծման իրականացման վերաբերյալ առա-

ջարկությունը՝ նշելով դրա նպատակը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

**9.** Այն դեպքում, երբ կամավոր խնդրի լուծման իրականացումը նախաձեռնում են բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտները, ապա վերջիններիս կողմից լիազորված ներկայացուցիչը (այսուհետ՝ նախաձեռնող) համայնքի ղեկավարին է ներկայացնում կամավոր խնդրի լուծման իրականացման վերաբերյալ դիմում՝ նշելով դրա նպատակը և անհրաժեշտության հիմնավորումը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

**10.** Համայնքի ղեկավարը դիմումը և սույն կարգի 9-րդ կետում նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝

1) կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայնվելու դեպքում՝ մեկամսյա ժամկետում ճշտում է դրանց արժանահավատությունը, հաշվարկում կամավոր խնդրի իրականացման համար գումարի մեծությունը և իր կարծիքը, ինչպես նաև կամավոր խնդրի իրականացման վերաբերյալ նախաձեռնողի ներկայացրած փաստաթղթերը և ավագանու որոշման նախագիծը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և այդ մասին տեղեկացնում է նախաձեռնողին.

2) կամավոր խնդրի լուծման իրականացմանը չհամաձայնելու դեպքում նախաձեռնողին՝ գրավոր տեղեկացնում է այդ մասին՝ նշելով չհամաձայնելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

**11.** Եթե կամավոր խնդրի լուծման իրականացման նախաձեռնողը սույն կարգի 9-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում համայնքի ղեկավարից չի ստանում կամավոր խնդրի լուծման իրականացմանը չհամաձայնելու մասին գրավոր պատասխան կամ իր փաստաթղթերը համայնքի ավագանուն ուղարկելու վերաբերյալ գրություն կամ եթե նախաձեռնողը համաձայն չէ կամավոր խնդրի լուծման իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու մասին հիմնավորումներին, ապա 20-օրյա ժամկետում համայնքի ղեկավարին ներկայացված դիմումի կրկնօրինակը՝ սույն կարգի 9-րդ կետում նշված փաստաթղթերի հետ միասին, իսկ կամավոր խնդրի լուծման իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու վերաբերյալ գրավոր պատասխանի առկայության դեպքում՝ այդ պատասխանի վերաբերյալ իր առարկությունները կարող է ավագանուն ուղղված դիմումը ներկայացնել համայնքապետարանի աշխատակազմ, որը պարտադիր քննարկվում է ավագանու առաջիկա նիստում:

Համայնքի ավագանու որոշման մեջ նշվում են՝ կամավոր խնդրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը, իսկ կամավոր խնդրի լուծման իրականացումը մերժելու դեպքում մերժելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

**12.** Համայնքի ղեկավարը կարող է իր որոշմամբ հատկացնել սոցիալական օգնություն և այդ մասին հաղորդում է ներկայացնում ավագանու առաջիկա նիստում, որը ավագանու կողմից ընդունվում է որպես ի գիտություն.

1) յուրաքանչյուր նորածնի ընտանիքին՝ եթե ծնողներից որևէ մեկը (հայրը կամ մայրը) փաստացի բնակվում է համայնքում.

ա. առաջին և երկրորդ երեխայի համար 30000 (երեսուն հազար) դրամ

բ. երրորդ և ավելի երեխայի համար 40000 (քառասուն հազար) դրամ.

2) յուրաքանչյուր նորակոչիկ զինվորի երդման արարողությանը մասնակցելու համար 40000 (քառասուն հազար) դրամ, եթե նորակոչիկը կամ հարազատներից որևէ մեկը փաստացի բնակվում է համայնքում.

3) համայնքի բնակչի հուղարկավորության կազմակերպման համար, եթե նա փաստացի բնակվել է համայնքում, նրա հուղարկավորությունը կատարողին՝ 40000 (քառասուն հազար) դրամ:

**13.** Սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվող մեկանգամյա սոցիալական օգնության առավելագույն չափը սահմանվում է 40000 (քառասուն հազար) դրամ: Արգելվում է սոցիալական օգնության հատկացումը համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպության աշխատակից հանդիսացող անձանց և նրանց ընտանիքի անդամներին:

**14.** Սույն կարգի խախտմամբ տրամադրված սոցիալական օգնության գումարները ենթակա են վերադարձման համայնքի բյուջե՝ համայնքի ղեկավարի անձնական միջոցներից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**15.** Համայնքի ավագանու կողմից սույն կարգով չկարգավորված կամավոր խնդիրների լուծումների իրականացումը սահմանվում եմ միայն ավագանու որոշմամբ:

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ՝ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 14 » ապրիլի 2020թ. №17-Ն

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2020թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով և 83-րդ հոդվածի 2-րդ կետով՝

**համայնքի ավագանին որոշում է.**

1. Կատարել Լոռի Բերդ համայնքի 2020թ. բյուջեում հետևյալ փոփոխությունները համաձայն՝ հատված 1-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ավետիսյան Արմեն Սիլվեստրի | [signature] | | |
| Խալաթյան Ավետիք Հարությունի | [signature] | | |
| Մարտիրոսյան Հուսիկ Հենրիկի | [signature] | | |
| Մուրադյան Կարեն Ցոլակի | [signature] | | |
| Շահնազարյան Թամարա Էդիկի | [signature] | | |
| Չիբուխչյան Արման Հրաչիկի | [signature] | | |
| Սախկյան Արտավազդ Ռուբիկի | [signature] | | |
| Սախկյան Էդգար Ռոբերտի | [signature] | | |
| Վարդանյան Մելանյա Գեորգիի | [signature] | | |

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

2020թ. ապրիլի 14

գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 14 » ապրիլի 2020թ. №28-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՎ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿՉԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 31-րդ կետով և ՀՀ Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունվարի 17 ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով և և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի բնակիչ Արեն Գևորգյանի դիմումը.

**համայնքի ավագանին որոշում է.**

1. Տալ հավանություն Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղում գտնվող՝ Արեն Գևորգյանի սեփականություն հանդիսացող 06-009-0040-0006 և 0007 ծածկագրերով 0.01694 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային գործառնական նշանակության:
2. Տալ հավանություն Լոռի Բերդ համայնքի Լեջան գյուղում գտնվող 06-038-0120 ծածկագրից առանձնացված 1.2 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոխադրելու և աճուրդ-վաճառքով օտարելու առաջարկությանը.
1 հեկտարի մեկնարկային գինը 1.440.000 ՀՀ դրամ:
3. Տալ հավանություն Լոռի Բերդ համայնքի Լեջան գյուղում գտնվող 06-038-0025-0006 ծածկագրով 0.07543 հա մկերեսով բնակավայրերի այլ հողը փոխադրելու բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ավետիսյան Արմեն Սիլվեստրի | [signature] | | |
| Խալաթյան Ավետիք Հարությունի | [signature] | | |

| | | | |
|---|---|---|---|
| րտիրոսյան Հուսիկ Հենրիկի | | | |
| ուրադյան Կարեն Ցոլակի | | | |
| Շահնազարյան Թամարա Էդիկի | | | |
| Չիբուխչյան Արման Հրաչիկի | | | |
| Սախլյան Արտավազդ Ռուբիկի | | | |
| Սախլյան Էդգար Ռոբերտի | | | |
| Վարդանյան Մելանյա Գեորգիի | | | |

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ.
2020թ. ապրիլի 14
գ. Լոռի Բերդ